



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

14 օգոստոսի 2023 թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Հ. Թովմասյանի

Անդամակցությամբ՝ Հ. Հովակիմյանի

Վ. Գրիգորյանի

Քննության առնելով Սաթիկ Կայծակյանի անհատական դիմումի  
ընդունելիության հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Սաթիկ Կայծակյանը (այսուհետ՝ Դիմող) դիմել է Սահմանադրական դատարան (դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2023 թվականի հուլիսի 17-ին)՝ խնդրելով.

«(...) քննության առարկա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 2-րդ մասի ՀՀ Սահմանադրության 61-րդ, 79-րդ հոդվածներին համապատասխանության սահմանադրականության հարցը»:

2. Ներկայացնելով թիվ ՏԴ/4131/02/21 քաղաքացիական գործի դատավարական նախապատմությունը և անդրադառնալով քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված դրույթի սահմանադրականության հարցին՝ Դիմողը նշում է, որ վիճարկվող տվյալ իրավանորմը՝ տառացի մեկնաբանությամբ, չի համապատասխանում Սահմանադրության 61-րդ հոդվածին:

Դիմողի պնդմամբ՝ Վճռաբեկ դատարանի կողմից նորմի միատեսակ կիրառման պրակտիկայի ձևավորման պահանջից կատարվել է շեղում, չի ապահովվել դատարանի մատչելիության, արդար դատաքննության իրավունքի իրացումը նաև այն տեսանկյունից, որ Վճռաբեկ դատարանն առհասարակ չի էլ անդրադարձել վճռաբեկ բողոքում բարձրացված հարցերին և դրանց հիմքերին ու հիմնավորումներին, հիմք է ընդունել վերաքննիչ քաղաքացիական դատարանի հիմնավորումները՝ չկատարելով օրենքի իմպերատիվ պահանջը:

Դիմողն ընդգծում է, որ Վճռաբեկ դատարանի կողմից իրավաչափ դատական ակտ կայացնելու հանգամանքն ընդունելու դեպքում կստացվի, որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածը չի համապատասխանում նույն օրենսգրքի 200-րդ հոդվածին այն առումով, որ օրենքը հստակ սահմանում է, որ Վճռաբեկ դատարանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը պետք է համապատասխանի Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածին, իսկ տվյալ հոդվածը սահմանում է, որ դատարանի համապատասխան որոշումը պետք է պարունակի հիմնավորումներ, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ:

Հավելելով՝ Դիմողը նշում է, որ Վճռաբեկ դատարանն առանց իրավական հիմնավորումների և հիմքերի մերժել է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը: Ըստ Դիմողի՝ նկատի ունենալով, որ իր պահանջի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը չի հիմնավորել բողոքը վարույթ չընդունելու մասին որոշումը, իր համար պարզ և հասկանալի չէ, թե ինչու են խախտվել իր՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքները:

Ողջ վերոշարադրյալի հաշվառմամբ Դիմողը եզրահանգում է, որ վիճարկվող նորմերը սահմանված չեն այնպիսի հստակությամբ, որ հնարավոր լինի դրսևորել համապատասխան վարքագիծ:

3. Ուսումնասիրելով սույն անհատական դիմումը և դրան կից ներկայացված դատական ակտերը, ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և 6-րդ մասով, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջները՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքում, երբ լրացել է Սահմանադրական դատարանի դիմելու համար նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված վեցամսյա ժամկետը: «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումները կարող է Սահմանադրական դատարան ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձը դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելուց՝ վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո:

Սահմանադրական դատարանի դատական կազմը փաստում է, որ թիվ ՏԴ/4131/02/21 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի՝ «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը, կայացվել է 2022 թվականի դեկտեմբերի

15-ին, որը Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի իմաստով Դիմողի գործով վերջնական դատական ակտն է և օրինական ուժի մեջ է մտել կայացման պահից: Մինչդեռ Սահմանադրական դատարան դիմումը ներկայացվել է 2023 թվականի հուլիսի 17-ին՝ վերջնական դատական ակտն ուժի մեջ մտնելուց ավելի քան վեց ամիս անց: Այսինքն՝ սույն անհատական դիմումը Սահմանադրական դատարան ներկայացվելու պահին արդեն իսկ լրացել էր «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վեցամսյա ժամկետը: Հետևաբար՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը, առանց անդրադառնալու սույն դիմումի ընդունելիության մյուս պայմաններին, եզրահանգում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և նույն հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, 69-րդ հոդվածի 3, 5 և 6-րդ մասերի պահանջները՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց .**

Սաթիկ Կայծակյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝



Հ. Թովմասյան

Հ. Հովակիմյան

Վ. Գրիգորյան